«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 8

041201.01.7 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 041201.06.7 «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ ձևավորված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԲ, ՈԱԱԿ և ԱՓՇՏԱԿ հիմնադրամներից կազմված մասնագիտական փորձագիտական խմբերի կողմից մշակված մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, մշակող փորձագետների կողմից քննարկվել են կրթական ծրագրերը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն՝ կողմ քվեարկությամբ հաստատվել են համալսարանի բանկային գործի և ապահովագրության ու ֆինանսների ամբիոնների 2021 թվականի դեկտեմբերի 15-ի համատեղ նիստում և հաստատման է երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:
2. **2022-2023** ուսումնական տարվանից սկսած 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել նոր ուսումնական պլանով:
3. Ներառյալ մինչև 2021-2022 ուսումնական տարին՝ 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված

ուսանողների ուսուցումը շարունակել մինչ ընդունվելու դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:

4. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2022-2023** ուսումնական տարվա համար մինչև 2022 թվականի մայիսի 30-ը 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանի համապատասխան մոդուլները:
5. Հանձնարարել համալսարանի բանկային գործի և ապահովագրության, ֆինանսների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների վարիչներին՝ 2022-2023 թվականներին ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգով սահմանված աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից՝ մինչև 2022 թվականի մարտի 30-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և արտաքին կապերի դեպարտամենտի հետ հստակեցնելով վերապատրաստվող ակադեմիական կազմի ցանկը և վերապատրաստման մասնագիտական մոդուլները:
6. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան